ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Մարինա Մանուկյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման և լավարկման նպատակով ի թիվս այլ բարեփոխումների իմ կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1264-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի մշակումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1264-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերը և պայմանները վերանայելու, իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները լուծելու անհրաժեշտությունից, ինչը կնպաստի անձնական օգնականի ծառայության լավարկմանը, արդյունավետության բարձրացմանը, և միևնույն ժամանակ կապահովի ծառայության մատուցման հասցեականությունը: Նախագիծը ներկայացվել է շահագրգիռ մարմիններին: Գերատեսչություններից ստացված դիտարկումների և առաջարկների հիման վրա նախագիծը լրամշակվել և

ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով: Ստացված փորձագիտական եզրակացությամբ ներկայացված դիտարկումների և առաջարկների հիման վրա նախագիծը գտնվում է լրամշակման փուլում: Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հստակեցնել անձնական օգնականի ծառայության հետ կապված իրավահարաբերությունները և բարելավել օրենսդրական դաշտը:

2. 2024 թվականի ընթացքում անձնական օգնականի ծառայությունից օգտվել է շուրջ 100 շահառու, իսկ 2025 թվականի պետական բյուջեի վերաբաշխման արդյունքում ևս 115 շահառուի հնարավորություն է ընձեռնվել ստանալ այդ ծառայությունը: Արդյունքում, ներկայումս ծրագրի շրջանակում անձնական օգնականի ծառայություն ստանալու հնարավորություն ունի 215 շահառու՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում:

3. Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներ տրամադրելու և դրանց վերանորոգումն իրականացնելու կարգը և պայմանները, աջակցող միջոցների ցանկը, պետական հավաստագրերի և դրանց հիման վրա տրամադրվող աջակցող միջոցների վերանորոգման փոխհատուցման գումարի չափը, առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների և դրանց վերանորոգման փոխհատուցման գումարի չափը հաստատելու մասին» N 1004-Ն որոշման իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները կարգավորելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համարժեք ծառայություն մատուցելու անհրաժեշտությունից: Նախագիծը ընդունվել է ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1698-Ն որոշմամբ: Արդյունքում լավարկվել է օրենսդրական դաշտը, ինչպես նաև ընդլայնվել է հաշմանդամություն ունեցող

անձանց տրամադրվող աջակցող միջոցների ցանկը, որոնք կապահովեն ավելի հարմար և մատչելի միջավայր: Ընդհանուր առմամբ ավելացվել է շուրջ 40 նոր աջակցող միջոց: Մասնավորապես՝

- Ֆունկցիոնալ պրոթեզի նոր տեսակներ
- Կոխլեար իմպլանտի խոսակցական պրոցեսոր
- Հաղորդակցման համար նախատեսված սարքավորումներ՝ համապատասխան ծրագրային ապահովումներով
- Տեղորոշման սարքեր
- Ինքնասպասարկման և խնամքի աջակցող միջոցներ
- Շարժունակության ապահովման համար նախատեսված աջակցող միջոցներ
- Անվասայլակների նոր տեսակներ
- Մեկանգամյա օգտագործման տակդիր՝ յուրաքանչյուրին ամսական 120 հատ:

4. Մշակվել և շրջանառության մեջ է գտնվում «Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծի ընդունման արդյունքում ծառայությունները տրամադրվելու են էլեկտրոնային համակարգի միջոցով (ծառայության մատուցումից մինչև վճարում), որի ծրագրային ապահովման նպատակով մշակման փուլում է գտնվում խնդրի նկարագիրը: Համակարգի թվայնացման աշխատանքները մեկնարկված են, ընդգրկված եմ աշխատանքային խմբում:

5. Ապաինստիտուցիոնալացման համատեքստում Հայաստանում կառուցվում և վերանորոգվում են համայնքային փոքր խմբային տներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց մշտական բնակության նպատակով: Մասնավորապես, անմիջական մասնակցություն ունեմ ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ, Ակնաշեն, Մրգաստան

համայնքներում ստեղծվող փոքր տների վերակառուցման և գործունեության կազմակերպման աշխատանքներին: Ակնաշենի համայնքային փոքր խմբային տունն արդեն իսկ պատրաստ է շահագործման:

6. Խնամքի հաստատություններում բնակվող անձանց՝ համայնքում անկախ ապրելու կարողությունները գնահատելու նպատակով մշակվել է հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալ կարիքների գնահատման հարցաթերթ, որը վերաբերում է անձի կենսագործունեության 10 ոլորտներին (գումարի կառավարում, սննդակարգ և սննդի պատրաստում, արտաքին տեսք և հիգիենա, առողջություն, տնային տնտեսության վարում, տրասպորտից օգտվելու կարողություն, աշխատանք փնտրելը, արտակարգ իրավիճակների և անվտանգության հմտություններ, համայնքի ռեսուրսների իմացություն, միջանձնային հմտություններ): Սույն թվականի ապրիլ-մայիս ամիսներին նշված հարցաթերթի միջոցով իրականացվել է անձի կարողությունների գնահատում: 67 հաշմանդամություն ունեցող անձի ֆունկցիոնալ կարիքների գնահատման արդյունքում ընտրվել է 27 անձ, ովքեր կարող են ինքնուրույն և անկախ ապրել համայնքային փոքր տներում: Առաջին փուլով բնակեցվելու է Ակնաշենի համայնքային փոքր տունը, որտեղ կարող է ապրել 12 շահառու: Հարկ է նշել, որ ապաինստիտուցիոնալացման համատեքստում խնամքի հաստատություններում բնակվող անձինք՝ կարողությունների և կարիքի գնահատման արդյունքում, շարունակաբար տեղափոխվելու են համայնքային փոքր տներ՝ ընտանեկանին մոտ միջավայրում ինքնուրույն և անկախ ապրելու նպատակով:

7. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Կարիտաս-Արեգակ» ՀԿ, «Խնամք» ՀԿ, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Ջերմիկ անկյուն» ՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

8. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ և ուղղորդումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների, անձնական օգնականի ծառայության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

9. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Փորձագետ՝ Մարինա Մանուկյան

29.12.2025թ.